ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՔՍԻՄ ՅԱԿՈԲԵԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութիւնների եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի համար:

Մեծարգոյ պրն Յակոբեան,

Այսօր Դուք ճանաչուած էք որպէս գործարար ու բարեգործ հայորդի, ով իր ջանքերն ու միջոցները ծառայեցնում է հայրենի երկրին, հարազատ ժողովրդին ու Մայր Եկեղեցուն, ազգային մեր կեանքի շինութեանն ու անկախ մեր երկրի առաջընթացին:

Մենք մեծապէս ուրախ ենք նաեւ Ձեր եկեղեցանուէր գործունէութեան համար՝ ի խնդիր Միւնեաց Տիրախնամ թեմի պայծառութեան: Առանձնակի գնահատանքի է արժան Ձեր մասնակցութիւնը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցման սրբազան գործում, որի օծման արարողութիւնը կատարեցինք Ազգային մեր կեանքում 1700-ամեակի խորհրդով յոբելեանազարդ 2001 թուականին՝ Ձեր եւ հաւատաւոր հայորդեաց աղօթական ներկայութեամբ: Շքեղակառոյց եկեղեցին այսօր իր դռներն է բացել Կապան քաղաքի բարեպաշտ մեր զաւակների առջեւ՝ մխիթարութիւն բերելով նրանց հաւատաւոր հոգիներին եւ Աստուածային օրհնութիւն սփռելով Միւնեաց աշխարհի նուիրական մեր հողին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու խորին գնահատանքն ենք յղում Ձեզ եւ, սիրով ընդառաջելով բարեջան Ձեր առաջնորդի ազնիւ խընդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով բարի ու հայրենանուէր Ձեր բոլոր իրագործումներին:

Թող ընտանեկան Ձեր հարկը շնորհընկալը լինի երկնատուր բիւր բարիքների եւ Աստծոյ առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 9-ն Օգոստոսի
Ցամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 102